օրինակի վրա անգործ հեռացված տեղեկում ջնարակը մուգ երանգ է ստացել: Հետաքրքիր է ցածր օղակաձև հատակով պնակի բեկորը (№ 1968/32), որի ֆոնը նույնպես ծածկված է մուգ կանաչ գույնի ջնարակով: Պնակի հատանք վրա փորագրելու և անգործ հեռացնելու եղանակով զուգահեռ տարված, ապա այդ գծերը թեք հատող շառավիղներով արված շեղանկյունազարդեր. որոնց վերջավորվող մասերը անգործ հեռացված լինելով, մուգ երանգ են ստացել: Շեղանկյունների մեջ տեղ-տեղ արված են փոքր շրջանաձև զարդեր: Նույն տեխնիկայով կանաչ գույնի ջնարակով արված նշաձև նախշերով է դարձարված № 1969/34 պնակի բեկորը: Ուշագրավ է նաև № 1066/133 պնակի բեկորը (շրթնամուտք): Անգործ հեռացնելու եղանակով պնակի շրթի մոտ ստացվել է կատարման վարպետության աչքի ընկնող գեղեցիկ պարանաղարգ, որը ի տարբերություն այլ անոթների վրա հանգիստ ունի զարդի ոչ թե գծագիր, այլ լայն, ծալավանաձև գեղեցիկ հյուսվածք է հիշեցնում: Հյուսվածքաղարգի եղբայրների վրա ջնարակը հաստ շերտով նստելով գեղեցիկ սև երանգ է հաղորդել վերջինիս: Պնակի ֆոնը ամրոջող ծածկված է մուգ կանաչ ջնարակով: Տառերի իմիտացիա հիշեցնող ոճավորված գեղեցիկ զարդով է զննարկված անգործ հեռացման տեխնիկայով արված պնակի բեկորը (№ 1967/158): Անգործ հեռացնելու տեխնիկայով զարդարված խեցեղենի նմուշների մեջ սակավաքանակ չեն գեղնա-սպիտակավուն ֆոն ունեցող օրինակները: № 1969/86 քրեղանի ներսից, անգործ հեռացնելու և փորագրելու տեխնիկայի զուգակցությամբ արված են նրբին, ոճավորված բուսական գեղեցիկ զարդանախշեր: Անգործ հեռացված տեղերում ջնարակը նստել է ուղղակի խեցու վրա և վերջինիս գեղեցիկ շաքանակագույն երանգ է հաղորդել: Պնակի գեղնա-սպիտակավուն ֆոնի վրա տեղ-տեղ կանաչ ջնարակով ցայտքեր են արված: Նույն եղանակով և բուսական ոճավորված զարդերով են գեղազարդված № 1964/352 և № 1964/355 պնակների բեկորները:

Գառնիի X—XIII դարերի ջնարակված խեցեղենի հավաքածուներում համեմատաբար մեծ քանակ են կազմում զարծյալ Դվինի խեցեղենի տիպի փորագիր զարդերով օրինակները. Գառնիի վազ փորագիր օրինակներից (№ 1964/354) գեղնա-շաքանակագույն ֆոն ունեցող պնակի վրա (№ 1964/354) շրթին մոտ, վերջինիս զուգահեռ տարված է պնակի ներսից շուրջանակի բոլորող երկգիծ զարդ, որը շաքանակագույն երանգ ունի: Միազույն ջնարակի ֆոն ունեցող նմուշներից (№ 1964/330) ցածր օղակաձև հատակով պնակի բեկորի վրա փորագրելու տեխնիկայով հատակի վրա աստիճանաբար են իրար հատող շառավիղներով Պնակի մակերեսը պատած է կանաչ գույնի ջնարակով:

Ուշագրավ է մասնավորապես մի պնակի բեկորը (№ 1964/349), որի վրա փորագիր զարդին զուգակցում է վերագիր զարդը: Պնակը ջնարակով է պատած նաև զրսից (մինչև հաակը): Պնակի շրթին մոտ վերեից և ներքևից երկգծերով եզերվող, պնակը զրսից շուրջանակի բոլորող զարդաժապավենի մեջ վերագրման եղանակով ամրացվել է ասես խաչի դարդ. զարդի շուրջ հատվածներից յուրաքանչյուրում արված է մեկական գնդիկ: Զարդը հիշեցնում է վարդյակի ոճավորված մոտիվը: Գծաղարգ օրինակներից ուշագրավ է բարձր օղակաձև հատակով ջնարակած պնակի բեկորը (№ 1968/32): Վերջինիս վրա արված են երկշրջան և ապա գծագիր վարդյակի գեղեցիկ մոտիվը, ըստ որում գծագրող տեղերում ջնարակը նստած է ուղղակի խեցու վրա և սև երանգ է ստացել: Քառակուսիներ հիշեցնող զարդեր է կրում բարձր օղակաձև հատակով պնակի (№ 1964/329) բեկորը: Հաակի վրա պատկերված քառակուսիների մեջ ար-



Տախտակ IV. Զեարակած պեղանների բեկորներ, XIII—XIV դարեր:



ված են հասկանալի շարքեր: Պնակի վրա պատկերվել են եռոտանոց ոտքերով հետքեր:

Բուսական պեղեցիներում հայտնաբերված դարձեր ունեցող պնակներից ուշագրավ է № 1962/30 պնակի շրթնամասը: Արջի սաղարթի ամրոցը ունի ծածկված է կաշու: Գոյնի քնարակում Պնակի շրթի վերին մասի վրա փորագրված իրարից 1 սմ հեռավորության վրա տարված են զուգահեռ գծեր, որոնց մեջ իրար հետոյ սպիրտային հեղուկով շրթից ներքև արված են 3 սմ լայնությամբ փորագիր դարձեր, ապա սրա մեջ ունեցող բուսական դարձեր, որպիսին հանդիպում են Գոյնի քնարակում օրինակների վրա: Գոյնի միջնադարյան խեցեղենի համալսարաններում հանդիպում են նաև փորագիր պնակների բեկորներ, որոնք վրա արված փորագիր նախընդհանուր է ինչպես դարձերը ապա, այլ ուղղակի պատկերված ուղղահայան և հորիզոնական գծերի հատումով, մասնաճանճան պատկերի հիշեցնող մոտիվներով պատկեր նախապես արված, այդպիսիների ֆոնը դերագանցակա ծածկված է զեղնապատկեր քնարակով: Այս տիպի օրինակներից № 1965/176 պնակի բեկորի վրա մեղրագմբե արված են ամրոցը ունեցող շեղանկյունաձև փորագիր դարձեր, եզրագծերը շաղանկապատկեր, պատկերված մակերեսը կանաչ քնարակով արված բուսական դարձեր: Պնակի վրա փորագիր տեղերը, որ քնարակ ուղղակի խեցու վրա է նստած շաղանկապատկեր է: Իրեն նույն բուսական ունեցող դարձերն են պատկերված մեծ քրեղանի (№ 1964/352) բեկորի վրա: Եկարագրվածներին հիշեցնող օրինակներ Գոյնի խեցեղենի համալսարաններում գրեթե չեն հանդիպում: Ի դեպ նկատենք, որ Գոյնի համալսարաններում փորագիր օրինակները պահպանվում են Փորագրելու տեխնիկայով պարզարված նմուշներից ուղղանկյուն արձանի է քնարակած պրոտիկի № 1967/155 բեկորը: Պնակը զեղնա-ուղիտակապատկեր ֆոնի վրա, շրթին մասը շուրջանակի ձգվում է լայն պարզամասկապատկեր, որի եզրերը և բուսական մակերեսն ամրոցը ունեցող զանազան փորագրված է փորագրելու տեխնիկայով: Զարդապատկերի վրա ուղղահայան և հորիզոնական տարված գծերի հատումով ստացվել է մասնի շեղանկյունաձև դարձեր: Պնակը դրսից պատած է բաց կանաչապատկեր քնարակով: Արջի շրթին պահպանվել է այլ առիթից թրծման մասնակ պատկերված խեցու և քնարակի մասը: № 1960/14 պնակի բեկորի վրա փորագրված է տեղային հետաքննելու տեխնիկայի պատկերով: արվել են երկրաչափական և բուսական պարզամոտիվներ: Պնակի կանաչապատկեր ֆոնի վրա հատակին արված է վերջինս շուրջանակի բոլորող զեղեցիկ համալսարանային: Այն եղևում է գծերով: Պնակի վրա գծերի մասերում քնարակը նստած է ուղղակի խեցու վրա: Այդ պատճառով շաղանկապատկերը երանգ է ստացել: Հյուսվածքադարձ ենք պատկերում նաև № 1968/14 քնարակած պնակի բեկորի վրա, որն ի տարբերություն վերը նկարագրվածի, ոչ թե սեյս է, այլ միայն փորագիր:

Գոյնի միջնադարյան շերտերի պեղումներով երևան բերված խեցեղենի լինությունը ցույց է տալիս, որ Գոյնին ունեցել է ինչպես անգործ հետաքննման, այնպես էլ փորագրելու տեխնիկայով պարզարված տեղական նմուշներ փորագրելու օրինակների զերակշռությունը:

Գոյնի խեցեղենի համալսարաններում մեծ քանակ է կազմում քնարակապատկեր խեցեղենի այն խմբերը, որը դերագանցակա դարձարված է վերջնական մասնաճանճան տեխնիկայով: Խեցեղենի այն խմբին բնորոշ է կապույտ, սև, մուգ կանաչ և այլ գոյնի քնարակներով պնակների, խեցանոթների պարզարժույթ: Այն խմբի մեջ մտնող նմուշների մի զգալի մասի հաաակի վրա կան վարպետի նշաններ,

ընդ որում վարպետի նշաններից մի քանիսը կրկնվում են. հանդիպում են նաև խոտանի բեկորներ, ինչպես և ջնարակած պնակների միջև թրծելիս գրվող եռոտանիները, որոնք վարպետի նշանով նմուշների հետ միասին ոչ մի կասկած չեն թողնում, որ խեցեղենի այս խումբը տեղական. Գառնիի արտադրանք է: Առնթեր նյութից, գարգամոտիվների և զարգարման տեխնիկայից ելնելով խեցեղենի այս խումբը թվագրվում է XIV—XV դարերով: Բերենք փորագիր զարգերով այս խմբի ամենարժեք մի քանի նմուշների նկարագիրը: № 1964/264, զնարակած պնակի բեկոր. խեցու հաստությունը հատակի մոտ 1,2 սմ փորագրումով պնակի անգորի վրա պատկերված են ոճավորված բուսական զարգեր: Պնակը ծածկված է փիրուզագույն ջնարակով: Նույն տեխնիկայով են զարդարված նույն ժամանակով թվագրվող № 1964/334, 1964/340 և այլ օրինակներ, որոնց վրա լրելին վերարտադրված են ոճավորված զանազան բուսական զարգամոտիվներ: № 1965/167 պնակի վրա փորագրումով արված պսակաթերթի պատկերող զարդերի վրա տարբեր գույնի ջնարակով արված են ցայտեր: Նույն տեխնիկայով է զարդարված № 1967/129 պնակի բեկորը, որի վրա արված են բրթաձևեր մուգ շագանակագույն և փիրուզագույն ջնարակով:

Գառնիի պեղումների, մասնավորապես ամրոցի մոտ, երեք աշտարակների հեռում պեղված տեղամասում, ինչպես նաև խճանկար հատակով բաղնիքի և պալատական կառույցների խմբի պեղումների ժամանակ վերին շերտերից հայնաբերված խեցեղենը առնթեր նյութից դատելով վերաբերում է XIV—XV դարերին և հանդիսանում է տեղական, Գառնիի արտադրանք: Վերջինս լադմագույն է. այն բնութագրվում է րավականին խճված զարգանկարներով: Այս խմբին առավել բնորոշ է բուսական խիստ ոճավորված զարդանախշը: Ընդ որում զարդանկարները միշտ չեն. որ կրում են հայկական զարգավեստին բնորոշ ձևերի կնիքը, վերջիններիս վրա զգալի տեղ է գրավում, թերևս պարսկականը, որը թեև ընդօրինակություն չէ, այնուամենայնիվ գզացվում է վերջինիս ազդեցությունը: Այդ դարերում խեցեղենի այս խմբի վրա հայկական զարգամոտիվների գերակշռության խախտվելը բացատրվում է երկրի քաղաքական անհաստատ վիճակով պայմանավորվող օտար բնակչության առկայությամբ, ինչպես նաև բնակչության, մասնավորապես վերնախավի սյդ ժամանակների աշակով: Խեցեղենը, որպես զանգվածային աբտադրության բնագավառ, բնական է. որ կրելու էր ժամանակի ազդեցությունը: Գառնիի XIV—XV դարերի խեցեղենի վրա հանդիպող զարդերն իրենց ոճավորությամբ առավել հիշեցնում են գորգային զարդերը, որոնց ինչպես հայտնի է բնորոշ է զարդերի առավել ոճավորումը:

Գառնիի XIV—XV դարերին թվագրվող խեցեղենի հսկայածուներում մեծ քանակ են կազմում վերջնարակման եղանակով զարդարված խեցանոթների նմուշները: № 1967/154 պնակի երկնագույն ֆոնի վրա սև գույնի ջնարակով, ներսից, հատակից դեպի շրթերն են տարված պսակաթերթի հիշեցնող լայն ճառագայթներ (շառավիղներ): Պնակի հատակի վրա ներսից նշարվում են եռոտանու ոտքերի տեղերը: Վերջնարակման տեխնիկայով զարդարված նմուշներից ուշագրավ է վարպետի նշան ունեցող բարձր օղակաձև հատակով պնակի (№ 1965/167) բեկորը: Պնակի ներսից, հատակին փիրուզագույն ֆոնի վրա սև գույնի ջնարակով արված է վարդյակը պատկերող զարդ: Վերջինիս պսակաթերթի եզրագծերն արված են սև գույնի ջնարակով: Պնակի հատակի վրա վարդյակի զարգամոտիվի շուրջն արված են դարձյալ բուսական, սակայն ոճավորված


դարդեր: Պնակի հատակի վրա պահպանվել են եռոտանոտ ոտքերի տեղերը: Վերջնարակման տեխնիկայով գեղադարձված խեցանոթներից ուշագրավ է նաև ջնարակառ պնակի (N° 1967/165) բեկորը: պնակի երկսագույն ֆոնի վրա սև գույնի չափակով արված է բուսական դարձ: Պնակի վրա, հիմնական, բուսական դարձումսովի ուղղորդներում դարձյալ սև գույնի ջնարակով արված են տրիխներ, որոնք աստիճանորեն անցնում են պնակի վրա պատկերված զարդաձևերը: Գրեթե նույն զարդն ենր գտնում N° 1963/32 պնակի բեկորի վրա: Փիրուզագույն ֆոնի վրա, սև գույնի ջնարակով՝ ուղղահայաց և ուղիղոնական տարված բարակ զծերի հատումով արված մանր քառակուսիներ հիշեցնող սոսիվով է գեղադարձված ջնարակառ պնակի (N° 1967/136) բեկորը (հատակը), բնդ որում պնակի հատակի վրա վերջնարակումով արված շրջանր քառակուսիների է բաժանված մեջրնգմեջ տարված ավելի հաստ և բարակ զծերով: Գրեթե նույն զարդն ուսեն N° 1965/169 և N° 1963/39 պնակի բեկորները: Երկրաչափական զարդ ունեցող խեցանոթների նմուշներից ուշագրավ է ցածր ողակաձև հատակով պնակ (N° 1961/260) բեկորը (հատակը): վերջնարակման տեխնիկայով պնակի երկսագույն ֆոնի վրա սև գույնի ջնարակով հաստ զծով արված են շրջաններ, կենտրոնական շրջանի մեջ հորիզոնական և ուղղահայաց տարված զծերով կազմված քառակուսիներ հիշեցնող զարդ: Շրջանների միջև, պնակի երկնագույն ֆոնը ամբողջովին կրակներ են, որոնք ասես զարդ լինեն: նկարարված պնակի ախլի այլ նմուշներով բավականին առաա է Գառնիի խեցեղենը: XIV—XV դարերի Գառնիի խեցեղենի հավաքածուներում բավականին մեծ բանակ են կազմում սպիտակ ֆոնի վրա կանաչ, կապույտ, փիրուզագույն և սև գույնի ջնարակներով պատած, բուսական և երկրաչափական զարդեր ունեցող խեցանոթների նմուշները: N° 1968/82 պնակի բեկորի վրա կանաչ, կապույտ, փիրուզագույն ջնարակով արված են ոճավորված երկրաչափական և բուսական սարկեր: Բեկորը փոքր է, վերջինիս վրա նշմարվում են շրջան հիշեցնող զարդը, որի մեջ կանաչ գույնի ջնարակով տարված են զծեր: զրանը պատում են շրջանաչափի ամբողջ մակերեսը: Երկու հասա զծերով արված կենտրոնական շրջանի զարդից վերև կան ոճավորված բուսական զարդեր: Պնակը զրսից ևս պատած է կզի ջնարակով: Մի այլ կանաչ գույնի ջնարակով արված երկու հասա զծերով պնակի (N° 1961/331) հատակի վրա պատկերված է շրջան, ապա շրջանի փիրուզագույն ֆոնի վրա հորիզոնական և ուղղահայաց տարված զծերով արված է մանր քառակուսիներ հիշեցնող սպիտակ, վերջինս կրկնում է N° 1967/136 օրինակի զարդը: Եռանկյուն զարդեր կրող ջնարակած խեցանոթներից N° 1965/167 պնակի բեկորի, շրվին մաս սպիտակ ֆոնի վրա, փիրուզագույն, ապա սև և կանաչ գույնի ջնարակով տարված են հաստ զծեր, որոնք զարդանախշի և զրաւորող զծեր են, ապա երկու կողմից պատած այս եռանկյուն (կանաչ, փիրուզագույն, կրկին կանաչ) և զրազծերի մեջ կանաչ գույնի ջնարակով սպիտակ ֆոնի վրա պատկերված է ինչ որ ծաղիկ: Մաղիի ցուպներ, վերջինիս պատկերված են տրված են կանաչ գույնի ջնարակով, ծաղկի վերջավորող մասը փիրուզագույն ջնարակով: Լեւո հիմնական դարձումսովի շուրջը արված են կրկին բուսական: բնդ որում խիստ ոճավորված, խճուղված զարդեր: Պնակի զրսից, զարձալ սպիտակ ֆոնի վրա կանաչ գույնի ջնարակով տարված են իրար զուգահեռ հաստ շտուպիկներ և բլթակներ: Պատկերվելի զարդ ունեցող նմուշներից N° 1965/167 պնակի շրվումասի վրա ներսից սև գույնի ջնարակով պատկերված է պսակաթևի, բնդ որում նրա կենտրոնում տարված է փիրուզագույն ջնարակով հաստ շտուպիկ, որից երկու կողմ տարածվում են սև գույնի ջնարակով արված

արմատի շյուղերը հիշեցնող ճյուղեր: Պատկերված սյակաթերթն ի տարրերություն Գառնիի և Դվինի խեցեղենի ավելի վաղ ժամանակով թվագրվող նմուշների. վերևի մասում եռանկյունաձև թեք հատումով է շրջափակված. պսակաթերթի եզրագծերն արված են սև դուլնի ջնարակով (երկգծով): Պնակը ջնարակով է պատած նաև դրսից. սպիտակ ֆոնի վրա շրթից ներքև իջեցված են շեղ արված շառավիղներ (աղեղնաձև զարդեր): Կանաչ և փիրուզագույն ջնարակով պատած պնակի վրա (№ 1965/248) արված են ոճավորված երկրաչափական զարդեր: Ի դեպ, նկատենք, որ նկարադրված ռուրը նմուշների ռեզերվներում արված են զանազան խճճված զարդեր. խախտված է ավելի վաղ նմուշների հատուկ կենտրոնական զարդի և նրան հարող զարդերի համաչափությունը և բնորոշված է XIV—XV դարերի խեցեղենի նմուշների վարդերին ընդհանրություն:

Գառնիի XIV—XV դարերի խեցեղենի հավաքածուներում հանդիպում են նմուշներ, որոնք ունեն կապտա-սպիտակավուն ֆոն և այդ ֆոնի վրա մանգանի դուլնի ջնարակով արված զարդեր. նուրը խեցիով պնակի (№ 1968/32) բեկորը վրա մանգանի մուգ ցալաուն գույնի ջնարակով արված է ռուսական ոճավորված զարդ: Նույն գույնի ջնարակով է ծածկված № 1967/153 պնակի բեկորի վրա պատկերված ռուսական զարդի՝ պսակաթերթի մակերեսը: Պնակի ֆոնը սպիտակ է, պսակաթերթի եզրագծերն արված են փիրուզագույն ջնարակով, ընդ որում պսակաթերթը վերջավորվում է եռանկյունաձև թեք հատումով. պսակաթերթի վրա նուրը մանգանի դուլնի ջնարակով արված են մանր ըլթակներ: Գառնիի վերջնարակման եզանակով զարդարված նման օրինակները ռավակաշին շատ են: XIV—XV դարերով թվագրվող Գառնիի խեցեղենի նկարադրված նմուշներն են հիշեցնում Հայաստանի Պեհակապատկան թանգարանի ֆոնդերում պահվող շինարարական աշխատանքների ժամանակ Երևանում և այլուր հայտնաբերված զգալի թվով նմուշներ, որոնց վրա ևս գերակշռում է ջնարակման եզանակով՝ կանաչ, փիրուզագույն ջնարակով արված զարդերը: Այսպիսով, Գառնիի XIV—XV դարերի խեցեղենը հնարավորություն է ընձեռում թվագրելու նաև Երևանի այդ ժամանակաշրջանի ջնարակապատ խեցեղենը: XIV—XV դարերի Գառնիի խեցեղենին ընդհանր է զարդերի խճճվածությունը, ֆոնի սպիտակ լինելը: Խեցեղենի նմուշների վրա գերազանցապես պատկերված են ռուսական մոաիվներ: Ջնարակներից դերազանցապես գործադրվել են սև, կանաչ, փիրուզագույն, ինչպես նաև մանգանի դուլնի ունեցող մեծապա օքսիդներ: Որպես տեխնոլոգիական փոփոխություն նկատելի է, փորագրելու անխնդիր ստված գործադրումը, դրեթե ռացակայում է անդորր հեռացնելու անխնդիր զեղազարդումը: XIV—XV դարերի Գառնիի, ինչպես նաև Երևանի խեցեղենի զեղազարդման մեջ գերակշռում է վերջնարակման տեխնիկան և պնակները դրսից անպայմանորեն ջնարակով պատելը: Հայանարեքված նմուշները հիմք են առնում եզրակացնելու, որ եթե IX—XIII դարերի ջնարակած նմուշների մեջ հանդիպում են առավել մեծ չափի խեցանոթներ, թասերի պնակների բեկորներ, ապա XIV—XV դարերի Գառնիի խեցեղենն նմուշները դերազանցապես ուղղահայաց ռարդացող և շրթերը փոքր ինչ ներձկված, ոչ մեծ ասորողության անոթներ են, առավելապես պնակներ, որոնք ունեն սովորարար սպիտակ ֆոն և դունավորված են սև, փիրուզագույն և կանաչ գույնի ջնարակներով: Ի վերջո Գառնիի XIV—XV դարերի խեցեղենի նմուշների մեծ մասը կրում են վարպետի նշաններ, ընդ որում որոշ նշաններ կրկնվում են. այս հանգամանքը խոսան օրինակների առկայու-



Տախաակ V. Քնարակած անոթների բեկորներ, XV դար



Քյան Դևո՝ ոչ մի կասկած չեն թողնում XIV—XV դարերում Գառնիում սեփական խեղեղենի արտադրության գոյության մասին: Գառնիի շնորակած խեղանոթների վրա արված վարպետի նշաններ հանդիպում ենք ոչ միայն XIV—XV դարերի, օրինակների, այլ նաև IX—XIII դարերով թվագրվող փորագրված ասեղանկալով գեղադարձված շնորակով պատած առանձին նմուշների վրա՝ վերջիններս հատակին: Վարպետի նշանները արվել են խեցանոթի հատակին դրոշմի: Չղնուխում, խեցանոթը դուրդի վրա պատրաստելիս հատակի վրա դրոշմակերպողը զանազան շանդիկներով և նաև խեցու թաց վիճակում ձողի օգնությամբ փորագրված վարպետի նշաններ, սակայն անպատշաճ կերպով ունենալով խեցեղենի վրա չեն հանդիպում:

Միջնադարյան Հայաստանի բաղաձայնների, դուրաքաղաքների, բերդ դղյակների պեղումների ժամանակ հայտնաբերված շնորակած խեցեղենի հավաքածուներում վարպետի նշան կրող նմուշներն անհամեմատ շատ են Գառնիի խեցեղենի հավաքածուներում: Մինչև 1959 թ. պեղումներն արդեն հայանի են շուրջ 50 օրինակներ, որոնց հատակի վրա դրոշմի դրոշմով արված են վարպետի նշաններ, վերջիններս իրենցից սերկալացնում են հնդկական և վեցթևանի աստղերի (N 1969/57, 1967/30) նմանվող շրջանի մեջ տարված դուրաքաղաքներով կազմվող (N 1968/32), ինչպես նաև շրջանի մեջ մասնա լվակներ խեցեղեղ զարդի ձևով (N 1967/133) վարպետի նշաններ: Վարպետի նշանները մեծ մասը ուղղուն, պարանոթ, վարպետի սևավորված բուսական պարզեր խեցեղեղ ունենալով նշաններ են (նկ. 36): Բալասկան սևի, բարդ բուսական պարզանախ խեցեղեղ դրոշմված: Են ներկայացնում N 1965/176ա, N 1964/262, N 1964/322—350 բեկորները: վրա վարպետի նշանները (նկ. 37):

Գառնիի խեցեղենի նմուշների վրա արված վարպետի նշանները սակավ են կրկնվում: Վարպետի նշանները առավելագույն հանդիպում են վերնարակատու ստանդարտով գեղադարձված պեղումների, ափսոսանքի նմուշների վրա: Գառնիի XIV—XV դարերի շնորակած խեցեղենի վրա առատորեն հանդիպող վարպետի նշանները մի ավելորդ անգամ հավաստում են Իմինի անկումից հետո Գառնիում խեցեղենի սեփական արտադրության գոյությունը: Բալասկանալի աստուրեն հանդիպող այդ խեցեղենի ստանդարտներով կարող է այդ ժամանակաշրջանի խեցեղենը բնութագրելու և նրա առանձնահատկությունները պարզելու առաջնությունը:

Համեմատելի: Գառնիում շնորակապատ խեցեղենի համեմատությամբ համեմատելի սակավ պարձաձևերն է կել: Գառնիում աչնումենայնիվ հալահապատ բեկորներ պեղվել են: Հանդիպում են միայն փրուդապույն հարթ և սևի, վերադիր պարզերով խեցանոթների բեկորներ: Միայն նմուշներից ուշագրավ է N 1967/149 պեղակ հատակը: Հալահապակի պեղակը ցածր հատակով է, ներսից մակերեսը պատած է փրուդապույն շնորակով: Պեղակի վրա շնորակի դանդաղումը նստած է բալասկան հասա ապակեման շերտով, որի ատկ նշանությամբ են ինչ որ պարզեր: Պեղակի ներսից, հատակի վրա պահպանվել են հասաանու ծալերի հարկեր: Տվյալ դեպքում այդ հանդամանքը խոսում է ոչ այնքան Գառնիում հալահապակի արտադրության, որքան նրա թանկ լինելու, անգամ խոսում արաահանելու փոստի մասին: Միայն կաթնարծաթա-


1 Հնդկական աստղի ձև ունեցող նշանով կզմինգրներ են հայտնի Խերսոնեսում: Տե՛ս Ա. Ս. Յակոբսոն, Средневековый Херсонес, МИА, № 17.

վուն ջնարակով է պատած նրրախեցի օղակաձև հատակով հախճապակե պնակի (№ 1961/91) մակերեսը դրսից և ներսից: Պնակի մակերեսին նշմարվում են կրակլեններ՝ ճաքեր, որոնք արդյունք են թրծման ժամանակ պնակի երկար պահվելու և ջնարակի որակի: Ներսից միագույն, այն է արծաթագույն ջնարակով է



1 6 6 սմ

Նկ. 36. Ջնարակած կավե պնակներ և թասերի հատակներ, վարպետների նշաններով: պատած հախճապակե ափսեի (№ 1967/3) ընկորը (հատակը): Պնակը դրսից պատած է մուգ կապույտ գույնի ջնարակով: Բերված օրինակները թվագրվում են XII դարով և ամենայն հավանականությամբ ծագում են Դվինից: Առանձին իրումը են կազմում և պատրաստման ու զարդարման եղանակներով ուղղակի կերպով Դվինի և Անիի միջնաբերդի պեղումներով հայտնաբերված



Նկ. 37. Ջնարակած կավե պնակների և թասերի հատակներ, վարպետների նշաններով:

Հախճապակու նմուշներն են հիշեցնում Գառնիի պեղումներով երևան բերված ունեցող, ինչպես նաև վերադիր զարդեր ունեցող օրինակները: Մի պնակի բեկոր (N 1964/240) չ. 4X3 սմ ներսից պատած է բաց փիրուզագույն ջնարակով, դրսից սպիտակավուն ֆոնի վրա տարված են եղևնազարդ հիշեցնող գծեր: Փիրուզագույն ջնարակով են պատած դրսից ունեցող զարդեր ունեցող N 1964/330, N 1964/250 տիսենների բեկորները: Առաջինի վրա դրսից նշաձև վերադիր զարդագոտու վերևից և ներքևից արված են շեղ. լայն գծեր: Ռեզիս զարդ ունեցող միապույն ջնարակով պատած հախճապակյա պնակի սմուշներից ուշագրավ է N 1967/110 պնակի բեկորը. վերջինիս վրա դրսից ունեցող զարդ պատկերում է ինչ որ ռճավորված բուսական մոտիվ: Վերջու Դվինի վերադիր զարդով հախճապակե անոթի (N 1794/121)՝ վարդյալի զարդն է հիշեցնում Գառնիի հախճապակե պնակի (N 1967/153) բեկորի վրա վարպետորեն վերարտադրված վարդյալի վերադիր ունեցող մոտիվը: Ինչպես նախորդ, այնպես էլ այս նմուշը ատրնթեր նյութից ելնելով թվագրվում է XII—XIII դարերով և բերված է Դվին քաղաքից:

Գառնիում գտնվել են նաև իրանական շողուն հախճապակու մի քանի բեկորներ: Իրանական հախճապակու ֆրագմենտար օրինակներից N 1965/154, (չ. 8X6 սմ) խեցանոթի սպիտակ ֆոնի վրա պղնձագույն ջնարակով արված են ռճավորված բուսական զարդեր:

Միջնադարյան Հայաստանի Դվին և Անի քաղաքաւեղիների պեղումների ժամանակ հայտնաբերված սելադոն անունով հայտնի բարձրորակ խեցեղենի նմուշներ գտնվել են նաև Գառնիում: Սելադոն անունով հայտնի չինական ծագում ունեցող խեցանոթների խեցին մանրահատիկ է, սպիտակ գույնի, կաթն, ծանր է և օժաված հնչունայնությամբ: Սելադոն անունով խեցանոթները պատած են բաց կանաչ գույնի ջնարակով. ընդ որում ի սուրբերություն ճնշապակյա այլ անոթների վերջինիս ջնարակը շատ ողորկ է նստած և շատ փայլի գունավոր ապակու տպավորություն է թողնում: Բերենք Գառնիում պեղումների ժամանակ հայտնաբերված նմուշներից ամենաբարձրների նկարագիրը: N 1965/186 պնակի բեկոր. վերջինս պնակի ջրթնամասն է, խեցու հաստությունը 0,8 սմ է, պնակի բաց կանաչավուն ջնարակի տակ թույլ կերպով նշմարվում են դրգի պտույտից առաջացած շրջանաձև գծերը, որոնք լասսա պնակը պարզաբերում համար են արվել: Ետ փուլող լայն շրթով մեծ չափի պնակի բեկորներից N 1967/105 վրա արված է ունեցող բուսական պարզ, որը թեև վերադիր չէ, սակայն նրբին կատարումով վերադիր ունեցող զարդի տպավորություն է թողնում: Խեցու հաստությունը 0,8 սմ է: Համեմատաբար հաստ խեցի ունի N 1964/244 պնակի բեկորը, որի խեցու հաստությունը զանգվածային մասում 1,3 սմ է, իսկ բարակ անդամ՝ 0,6 սմ: Պնակի վրա ունեցող զարդի ապավորություն թողնող տերևազարդ, ձևավոր, ետ փուլող շրթով պնակի բեկորներից ուշագրավ է N 1964/231 մեծ պնակի շուրթը: Գառնիի պեղումների միջոցին երևան բերված չինական բարձրորակ խեցեղենի՝ սելադոնի նմուշներից բացի հայտնաբերվել են նաև բաց կանաչավուն ջնարակով պատած սպիտակաթեցի պնակների բեկորներ. որոշ ուսումնասիրողներ հավելած են վերջիններս անվանելու տեղական սելադոնի նմուշներ, կարծիք, որը շատ հեռու է իրականությունից: Հայտնաբերված նմուշները շունեն չինական սելադոնին բնորոշ կարծ:

1 Տե՛ս Կ. Ղաֆադյան, Դվին քաղաքը և նրա պեղումները, էջ 224:

րություն, խեղու ծանրություն, վերջիններս ավելի շուտ հախճապակու նմու-
սեր են, որոնք առայժմ սակավ հայանի են, քիչ են հանդիպում միջնադարյա
Հայաստանի խեցեղենի հավաքածուներում:

Գառնիի պեղումներից հայտնաբերված չինական խեցեղենի՝ սելագոնի
նմուշները երևան են եկել XII—XIII դարերով թվագրվող հնագիտական նյութի,
մասնավորապես շնարակած խեցեղենի հետ: Վերջինիս բեկորները հար և նման
են Անիի պեղումների ժամանակ երևան բերված օրինակներին, որոնք թվա-
դրվում են XII—XIII դարերով: Չինական սելագոնի XII—XIII դարերով թվա-
դրվող խեցեղենի նմուշների զուտոր մեր կարծիքով շատ ավելի խոսում է
վերջիններիս սրպես պարզասյանկի օգտագործման մասին, քան որում նրանք
կարող էին օգտագործվել նաև ավելի ուշ ժամանակներում:

Նեֆաղյուսներ: Միջնադարյան Հայաստանի արհեստային արագորության
և տոսարի խոշոր կենտրոնների՝ Անիի և Դվինի պեղումների ժամանակ հայտ-
նաբերվել է նաև նշանակալից քանակությամբ յուրահատուկ խեցեղեն, որը
հնագիտական պրականություն մեջ հայտնի է շրջադուս անունով: Շրջադուսները
սպիտակ խեցիով, կտրուկարի մեջ պատրաստված միայն տրտաքին մակերե-
սին շնարակ ունեցող շինարարական խեցեղենն է: Մինչև այժմ Հայաստանում
հայտնաբերված շրջադուսները, ստորաբաժանվում են երեք հիմնական խմբերի՝
1. անդական միապույն շրջադուսներ, 2. անդական զարդարուն շրջադուսներ և
3. ներմուծված իրանական շրջադուսներ: Անիի և Դվինի պեղումներով հայտնա-
բերված շրջադուսների անդական բաժանակ կազմող նմուշները հիմք են
առելու և պրակացնելու, սր առաջ քաղարներն ունեցել են շրջադուսի անգական տը-
տագորություն: Շրջադուսի համար օգտագործվում էր հիմնականում սպիտակ
կավ, սրբ թրծելուց հետո անհրաժեշտ կարծրություն էր ձևեր բերում և օգտա-
գործվում շինարարական կարիքների համար: Կավը քարերից և այլ առարկա-
ներից մարբելուց հետո «հանցվում» էր, ապա զրվում ձևավոր կտրուկարների
մեջ, մինչև չորանալու, ապա չորացած աղյուսը, եթե այն միազույն գույն էր ու-
նենում, մի երևում լեկվում էին շնարակով լեցուն ամանի մեջ, հանում այդ
ամանից, փսրը ինչ չորացնում և ապա թրծում շրջադուսների համար հատուկ
թրծման հարմարանքներում:

Անիի, Դվինի և Գառնիի պեղումներով հայտնաբերվել են նշանակալից քա-
նակությամբ միապույն դանդաղան ձևի շրջադուսներ, որոնց ավելի ճիշտ կլինի
անվանել շնարակապատ նուրբ սալիկ, բան շրջադուս: Ավելի մեծ բանակ են
կազմում, Անիի, Դվինի, Գառնիի պեղումների ժամանակ հայտնաբերված շրջա-
դուսները: Բազմաթիվ շրջադուսներ, որոնք ինչպես արդեն պարզված է մեծ
մասամբ ներմուծվել են իրանական քաղաքներից: Հայտնի է, որ Հայաստանը
բարի ճարտարապետական, բարակուսական քաղաք արվեստի հայրենիքներից
մեկը լինելով շրջադուսի կարիքը քիչ ուներ: Շրջադուսի շինարարության մեջ
թափանցել է պերսիական պարսկական վերնախավի ինչ որ շատով օտարի ճաշակին
ձայնակցելու մղումով: Հայաստանում օտար խավի գոյությամբ է, որ երևան են
գալիս անբնականաբար աղյուսները, որոնք մեծ բանակությամբ հայտնաբերվել են
Դվինի պեղումների ժամանակ: Անիի, Դվինի և Գառնիի պեղումների միջոցին
երևան բերված շրջադուսների պլուսերը ցույց են առել, որ երբեմնի խիստ ան-
նշան չափերով գործածվող շրջադուսը XII դարի վերջից սկսում է որոշ տես սրա-

1 Կ. Ղ ա ճ ա պ ա յ ա ն, Դվին քաղաքը և նրա պեղումները, Երևան, 1952 թ.:

վել շենքերը հարդարելիս: Գառնիում հայտնաբերված շքաղյուսները առնթեր նույն ժամանակահատվածում են XII—XV դարերում: Գառնիի միջնադարյան շերտերի պեղումներով հայտնաբերված իրանական շքաղյուսների բեկորների առանձին օրինակների վրա հանդիպում են հատվածներ Իրանի դասական դրոշմների չափածո ստեղծագործություններից. ինչպես նաև քառյակներ, մի քանի օրինակների վրա վերջիններիս խմբագրիչ են դարձել: Իրանական դասական դրոշմներից քառյակներ, հատվածներ պարունակող շքաղյուսներ են հայտնի նաև Անիի պեղումներից հայտնաբերված իրանական ծագում ունեցող նմուշների վրտ: Գառնիի շքաղյուսները թերևս օգտագործվել են Գառնիում քաղաքացիական (ամառանոցային) շենքերը հարդարելու համար: Գառնիում հայտնաբերվել են ոչ միայն իրանական, այլև տեղական շքաղյուսների բեկորներ, որոնք իրենց ձևով հիշեցնում են միջնադարյան ճարտարապետական հուշարձանների մուսքերի վերև դրված բազմաճիւղի զարդարուն քարերը: Իրանական շքաղյուսները տեղական նմուշներից առարկերում են ոչ միայն ջնարակի դույններով, դարձերով, ձևով, այլև խեցու դույնով: Տեղական շքաղյուսներից № 1965/166 նմուշից դատելով վերջինս ունեցել է բազմաճիւղի ձև, պատած է կապտա-փիրուզագույն ջնարակով: Նման ձևի, սակայն, այլ դույնի ջնարակով պատած նմուշներ են հայտնի նաև Անիի հավաքածուներում: Բազմադույն շքաղյուսներից ուշագրավ է № 1963/95 բեկորը, որի սպիտակ ֆոնի վրա մուգ և բաց կապաավուն ջնարակների ցայաքեր են նշմարվում: Իրանական, թերևս Ռեյ, Սուլթանարադ, Վերամի, Նշանավոր կենտրոնների արտադրանք հանդիսացող շքաղյուսներից ուշագրավ է № 1965/187 բեկորը (չ. 7X5 սմ), վերջինիս սպիտակ ֆոնի վրա պատկերված է կնոջ նրբին դիմանկարը, ռեզերվում զանազան դույնի ջնարակներով արված և նրուական և երկրաչափական զարդեր: Գառնիի պեղումներով հայտնաբերված շքաղյուսներից ամենաուշագրավներից է քառաթև շքաղյուսը (№ 1965/161), որի կեսն է պահպանվել: Շքաղյուսի մակերեսին նրբորեն արված են բուսական դեզեցիկ զարդեր (պսակաթևեր, ծաղկազարդ): Ի վերջո իրանական շքաղյուսներից ուշագրավ են № 1964/257, № 1964/254, Գ. 1950, № 1965/163, № 1965/165, № 1966/103 շքաղյուսների բեկորները, որոնք տարբեր դույնի ու երանդի ջնարակների դործագործումով դեզազարդված են բուսական, երկրաչափական դեզեցիկ զարդերով. վերջիններիս եզրերին կան պարսկական դասական դրոշմների ստեղծագործություններից փոքր հատվածներ և քառյակներ:

Գառնիի պեղումներով երևան բերված խեցեղենի քննությունը ցույց է առնում, որ միջնադարյան Գառնիում բազմադան է եղել խեցեղենի արտադրությունը, նրա զարդարման առնչական: Խեցանոթների և խեցեղեն կերտվածքների դեզազարդման համար դործագործվել են փորագրելու (դրավիրով կա), վերագրման, դրոշմումով զարդարելու, անդորով պատելու, փայլեցնելու, ջնարակելու եղանակները: Գառնիի բազմադան խեցեղենի հավաքածուները հիմք են առնում եղրակացնելու, որ Գառնին ոչ միայն մերձակա խոշոր քաղաքի արհեստագործության և առևտրի խոշոր կենտրոն Դվինի խեցեղեն արտադրանքի սպառողներից է եղել, այլև ունեցել է տեղական արտադրություն, որը XIII—XV դարերում զգալի չափերի է հասել: Խեցեղենի արտադրությունը որոշակի աեղ է դրավել ավտնատիպ լաղաքների արտադրանքի մեջ, այդ են ցույց տալիս Գառնիի բազմադան խեցեղենի հտրուտ հավաքածուները: Գառնիի խեցեղենի նմուշների վրա պատկերված զարդամոտիվները հիշեցնում են, երբեմն էլ ուղղակի կրկնում են Հայաստանի խեցեղործության խոշոր կենտրոնների, Դվինի և Անիի խեցեղեն




4 cm



1 0 7 սմ.

Տախտակ VI. Իրանական շրջանի թերթեր:



գլխավորապես զարգերը: Գառնիի խեցեղենի ուսումնասիրությունը օգնում է բազմաթիվ հետազոտողների փոխադարձաբերությունների, վերաբերման արտահայտման և արտադրական կենտրոնների պատկերի բացահայտման:

Մենի և Դվինի անոթանոցում հայտնաբերված խեցեղենը ու միայն զեզարմասական հետաքրքրություն է ներկայացնում. այլև կարևոր նշանակություն ունի միջնադարյան, ֆեոդալական խոշոր քաղաքի արհեստային արտադրության, առևտրի, բազմաթիվ մշակույթի հետ կապված բազմաթիվ հարցերի ուսումնասիրության համար: Ամբերդի պեղումների ժամանակ հայտնաբերված խեցեղենի բնությունը թույլ է տալիս պարզելու քաղաքների և բերդ-դղակների, դյուղարդարների միջև եղած բարդ փոխադարձություններն ու զգալիորեն արհեստագործություն պատկերը: Գառնիի միջնադարյան շերտերի պեղումներով երևան բերված բազմաթիվ խեցեղենի ուսումնասիրությունը կարևոր է գյուղատնտեսության արհեստատիպ արտադրության և առևտրի հարցերի, ինչպես նաև գյուղատնտեսության և քաղաքի, մասնավորապես Գառնիի և Դվինի կապերի ուղարկարտման, այդ ժամանակաշրջանի մշակութային կյանքի բնութագրելու տեսակետից: Գառնիում հայտնաբերված խեցեղենի մեջ մեծ քանակ են կուտրվում մասնավորապես հասարակ, անդադող, չղկած և փայլեցրած կարմրուկ խեցանոթները:

Պեղումներով հայտնաբերվել են սնականների, կժերի, աղաթանների, սափորների, կճուճների, կտվե տաշների, ձիթաճրագների, լոտների, կարասի և այլ խեցանոթների կափարիչներ, բրդանների, ծխամորճերի ամբողջական և ֆրագմենտար օբյեկտներ: Խեցեղենի այս խումբը հետաքրքրություն է ներկայացնում ոչ միայն արհեստատիպ արտադրության կազմակերպման, խեցեղենի կերտման տեխնոլոգիայի տեսանկյունից հարցերի պարզաբանման, այլ բուն ժողովրդի տնտեսության ու կենցաղի, զեղարվեստական ճաշակի հարցերի վերաբերյալ տեսակետից: Համարժեցում է, որ հասարակ խեցեղենը միջնադարյան բազմաթիվ և գյուղատնտեսություն կերտվում էր գուրգի վրա, տեղում կազմակերպվում: Կապարանների մեջ էր պատրաստվում զերապանցապես շինարարական, տնտեսական այլ կարիքների համար զործածվող խեցեղենը: Ֆիգուրայ, կապարանների մեջ պատրաստված խեցանոթների տեսանկյունից բերան, որոնք հայտնաբերվել են Գառնիում, կարծում են, որ բերվել են Դվինից և Հայաստանի այլ խոշոր կենտրոններից: Գուրգի վրա է պատրաստվել ամբողջ ջնարակած խեցեղենն ու հախճապակին:

Գառնիի պեղումներով հայտնաբերված ամենաբազմազան խեցեղենի քանակությունը բերում է այն համոզման, որ շնայած խեցանոթները, զերապանցապես պատրաստվել են գուրգի վրա, այնուամենայնիվ ձևորով են պատրաստվել տեսանկյունից, մասնավորապես գինու համար միջին մեծությամբ, ինչպես նաև ուլ կարիքների համար պատրաստված խեցեղենը: Գառնիում թեև միջին այժմ թրծման հնուց չի հայտնաբերվել, սակայն նշանակալից քանակությամբ խեցեղենի խտանի տեղադրությունը և բարեկրկների և եռոտանիների գլուխները ցույց են տալիս, որ Գառնին արտադրել է թեև հասարակ և թեև ջնարակած խեցեղեն: Խեցանոթներ կերտելիս Գառնիի կապարանները օգտագործել են տեղում կազմակերպված կարմիր և զեղնալույս կավը. առանձին նրբին կերտվածների համար հնարավոր է, որ բարձրորակ կավը բերելին Դվինի: Մերձակայից:

Գոյութիւն ունենալով հին ժամանակներից մինչև մեր օրերը՝ Գառնին արտացոլել է հայ ժողովրդի դարավոր պատմութիւնը՝ իր սոցիալական քաղաքական իրադարձութիւնների և փոխակերպութիւնների գլխավոր էտապներով, հայ ժողովրդի շինարարական և ստեղծագործական կորովը. օտարի գեմ նրա մաքառումը մասամբ և նրա կապերն ու փոխհարաբերութիւնները հարևան ժողովուրդների հետ: Գառնիում խաչաձևվել են ոչ միայն հայ և օտար ժողովուրդների սրերը, այլև նրանց մշակութիւնները:

Պատահական չէ. որ Գառնին հանգես է գալիս իբրև հին Հայաստանի այսպես կոչվող հելլենիստական պապեր ունեցող մշակութի օջախներից մեկը, որտեղ ստեղծագործվել են հին հայկական մշակութի այնպիսի նշանավոր հուշարձաններ, ինչպես ամրոցաշինութիւն կատարյալ օրինակ հանդիսացող պարիսպը, հոյակապ քանդակազարդ հեթանոսական տաճարը, մոզտիկ հատակով բաղնիքը, մարմարե քանդակներով և արձաններով զարգարված այլ շէնքերը:

Անտիկ շրջանի հուշարձաններին զիջելով հանդերձ իրենց ժամանակի համար պակաս ուշագրտվ չեն եղել Գառնիի միջնադարյան հուշարձանները՝ արաբին կամարակապ սրահով ռազմիկան, բոլորակ քառախորան և կենտրոնական զմբեթով պսակվող եկեղեցին, Մաշտոց Հայրապետ անվանվող (Աստվածածնի) գողարիկ եկեղեցին՝ XII—XIII դարերի համար բնորոշ իր առանձնահատկութիւններով և այլ պաշտամունքային շէնքերն ու քանդակազարդ ռարձրարվեստ կոթողները:

Գառնիի բնակչութիւն ստեղծագործ ջանքերը դրանցով չեն սպառվել և ավելի նշանակալից են եղել նյութական ռարիքների և այլ արժեքների ստեղծման՝ երկրագործութիւն, մանսվանդ այգեգործութիւն և արհեստագործութիւն, բնադավառներում: Գառնիի հյուսիս-արևելյան ծայրին գտնվող հորդառասա աղբյուրներից անցկացված էր ոչ միայն ջրմուղի դիժ, որը խմելու ջուր էր ստակտորարում ամրոցին, այլև առու՝ այգիներն ու պարտեզները ոսոգելու համար: Վիմական արձանագրութիւնները և սմրոցի պեղումները, որոշտիկ ցույց են ապրիս, որ այգեգործութիւնն ու պիներգործութիւնը աչքի բնկնող աեղ էին գրավում միջնադարյան գյուղաբաղաբի տնտեսութիւն մեջ, իսկ պինին առուծախքի առաքկա էր:

Միջնադարյան գյուղաբաղաբ Գառնին կապված էր Հայաստանի այնպիսի խոշոր քաղաքային կենտրոնների հետ, ինչպիսին էին Դվինը և Անին: Դվինից մասամբ Անիից Գառնի էին ըկրում արհեստագործութիւն պաարաստի արասադրանքներ, օրինակ խեցեղեն, որի նմուշները գտնվել են պեղումների ժամանակ: Կարելի է առանց չափանգանցութիւն ասել, որ Գառնին շատ բաներում հետևում էր Դվինին և Անին: Այդ որոշակիորեն նկատելի է Գառնիի ճարտարապետական հուշարձանների ու նրանց հարդարման աւանձնահատկութիւնների մեջ՝ քանդակ քարի վրա, սլաքաձե կամարով խորշեր կամ խուղ պատուհաններ, ինչպես և աղյուսաշար խորշեր շէնքերի մեջ, շքաղյուսի օգտագործում և այլն: Դվինի և Անիի իրերի հետ շատ ընդհանրութիւններ ունեն Գառնիում արտագրված արհեստագործական իրերն ու առարկաները, հասարակ և ջնարակած խեցեղենը, մետաղներից, քարից, ոսկորից, ապակուց և այլ նյութերից պաարաստված իրերը: XIII դարի սկզբներից Գառնիի կապերը Դվինի

հետ ավելի բերա լնությունը ստացան բանի որ այս գյուղաքաղաքը եւս պատկանում էր Դավիթին ախրացած Ջարարյան իշխաններին:

Միջնադարյան Գառնի գյուղաքաղաքում տրանսպորտը էր զգալի դրակային արհեստագործության նեղ շրջանակներից և զարդանում էր քաղաքային արհեստագործության հետքերով ու հիմունքներով: Բարձր զարգացման էին հասել շինարարական արհեստները՝ քարագործությունը, աղյուսագործությունը, կրողործությունը, որմնադրությունը, աստղագործությունը, զեղարվեստական քանդակ բարի վրա: Չգայի տեղ էին գրավում մետաղագործական արհեստները՝ դարբնությունը, գինադործությունը, պղնձագործությունը, ամրանարար նաև ոսկերչությունը, որի արտադրանքի նմուշներ, թեև համարյա չեն պահպանվել:

Հասարակ խեցեղենի արտադրությունը՝ իր տեխնիկայով (արտադրությունը գորգի վրա) անոթների բազմազանությամբ և հարդարման ձևերով գծագրություն, ներհույսում ճշմամբ, փայլեցում կոկիչներով, դրոշմազարդում և այլն չի տարբերվում քաղաքներում պարզացած խեցեղործությունից:

Գառնիում պարտաստվում էր նաև ջնարակած խեցեղեն, որի արտադրությունը, ինչպես և ևրևում է ավելի բնորոշակվում է Դավիթի անկումից հետո՝ այդ բազմաթիվ Գառնի տեղափոխված արհեստավորների ջանքերով: Ջնարակած խեցեղենի արտադրությունը Գառնիում հաստատվում է ոչ միայն Անիի և Դավիթի խեցեղենից տարբեր անոթների և նրանց բեկորների առկայությամբ, այլև կավի եռանկյունիների պլաստիկ, որոնք պահվում էին ջնարակած անոթների ու թասերի միջև՝ իրենց նրանք իրարից տեղափոխված համար:

Գառնիի միջնադարյան շերտերից պահվել են նաև սոպակյա անոթների և սպարանջանների բեկորներ, սակայն ապակու արտադրությունը Գառնիում ստանում է թեթևանում Ապակու անոթները և սպարանջանները կարող էին Գառնի լինել Դավիթից և այլ բազմաթիվ:

Ոսկեր իրերը պարտաստվել են տեղում, որը հաստատվում է ամբողջի պեղումների մասնատված անոթների, մանափանդ եղջերուի օղաագործված և սպողված եղջյուրների մնացորդների հայտնաբերումով:

Բացի հիշատակվածներից Գառնիում եղել են և այլ արհեստներ՝ ջուլահություն, բարից, փայտից պանաղան առարկաներ, հարմարանքներ ու սարքեր պարտաստելը և այլն: Այսպիսով Գառնին միջին դարերում լինելով գյուղաքաղաք այս կամ այն չափով պարձել էր արհեստագործության կենտրոն և արհեստագործական արտադրանքի շատ անոթներով, ինչպես և արտադրության տեխնիկայով բնութանում էր խոշոր բազմաթիվ հետքերով, ինչպես և մնալով նրանցից՝ արտադրության և տեղաբնակի ծավալով:

Գառնիում արտադրվող մի շարք առարկաներ հանդիսանում էին վաճառքի առարկա, օրինակ գորգի օգնությամբ պարտաստվող, դրոշմազարդ, փայլեցրած խեցեղեն, ինչպես և ջնարակած խեցեղենը սոսկ արհեստավորների տնային կարիքների համար արտադրվել էին կարսի և ունեին փոխնակալին նշանակություն: Վերևում տեսանք, որ Գառնիում կային «տոմաղատարներ», այսինքն վաճառվող իրերից հարկեր պանծող շուկայական պաշտոնյաներ, որոնք բոլոր էին վերջնում նաև պիտու փաճառքից: Առանց շուկայի չէին լինի և շուկայական հարկահան պաշտոնյաներ:

Պեղումների մասնատված Գառնիում պահվել են ոչ միայն Դավիթից և Անիից բերած իրեր, այլև իրանական խեցեղենի, տեղում չինական սելագոնի բեկոր-

ներ, որոնք կարող էին այստեղ ընկնել ինչպես մեծ քաղաքների հետ եղած առևտրի, նույնպես և Գառնի այցելող առևտրական կարտվանների միջոցով։ Աբարական, բյուզանդական, սելջուկյան, սոնղուկսոն դրամական գանձերի գյուտերը, ինչպես և հիշյալ տերութւոյնների ու վրացական առածին ուսմաների հաճախակի գյուտերը պեղումների ու երկրագործական աշխատանքների ժամանակ խոսում են այն մասին, որ Գառնին առևտրական տեսակետից այնքան էլ աննշան կենարոս չէր։

Կյանքի հարատւութւոյնը Գառնիում հնագույն ժամանակներից մինչև ուշ սրջնադար այդ նմանալորին հաղորդում է բացառիկ նշանակութւոյն տարբեր դարաշրջանների մշակութւոյնների պատկերը, նրանց հաջորդական կապերը, պտրգելու և ժամանակագրական սույն հարցերը քննելու տեսակետից։

Այդ բանը հավասար չափով վերարերում է ոչ միայն էնեոլիթին, վաղ բրոնզին, անտիկ ժամանակաշրջանի մշակութւոյնին, այլև միջին դարերին։

Գառնիում որոշակի դրսւում են միջնադարյան երեք շերտեր, որոնք հաջորդաբար ընդգրկում են վաղ, դարգացած և ուշ միջնադարւան դարաշրջանները, իրենց բնորոշ մշակութային մնացորդներով։ Հայանի հ, որ Հայաստանում, շնորհիվ Անիում և Դվինում կատարված երկարամյա ժամաւուն պեղումների լավ է ուսումնասիրված դարգացած միջնադարյան մեծ քաղաքը և նրա մշակութւոյնը։ Դվինը միջնադարյան նշանավոր ճարտարապետական հուշարձաններից բացի տալիս է նաև այդ ժամանակաշրջանի կարևոր այլ նյութեր, խեցեղեն, ապակեղեն, մետաղե իրեր և այլն։ Նույնը կարելի է ասել և Գառնիի վերաբերյալ։ Այստեղ ևս բացի վաղ միջնադարյան ճարտարապետական հուշարձաններից, պեղումների ժամանակ հայտնաբերվել են նույն ժամանակաշրջանի խեցեղեն, ապակեղեն և այլ իրեր, որոնց խորադնին ուսումնասիրութւոյնը, նրանց շերտագրութւոյնն ու ժամանակի ստույգ որոշելը, Դվինի նյութերի հետ համադրելով հանդերձ ներկայացնում են գիտական մեծ կտրեորութւոյն։ Գառնիի արշավախումբը արդեն սկսել է ճանաչել վաղ միջնադարյան նյութերը, բայց պետք է ավելի ուշադիր հետեւել նրանց շերտագրութւոյնը և ուսումնասիրել նրանց առանձնահատկութւոյնները։

IX—XIII դարերում Գառնին հետեւելով Դվինին և Անիին ձգտում էր նմանվել նրանց, սակայն ամեն անսակետով ետ էր մնում նրանցից։

Ինչ վերաբերում է ուշ միջնադարյան մշակութւոյնին, ապա այդ հարցում Գառնիի հետ չեն կարող մրցել ոչ Անին, ոչ էլ Դվինը, որոնք վաղ կործանվեցին, ուստի ուշ միջնադարյան մշակութւոյնից նյութեր համարյա չեն աւալիս։ Կյանքը Գառնիում անընդհատ հարտեւել է մինչև XVII դարը, ըստ որում Գառնին XIV—XV դարերում պահպանել է գյուղաքաղաքի, իսկ ավելի ուշ Գառնի դավառի կենտրոնական սովանի գերը, հետևապես մտստմբ և արհեստագործական և առևտրական կենտրոնի նշանակութւոյնը։ Ահա այդ է պատճառը, որ Գառնիում երևան են գալիս ջնարակած և հասարակ խեցեղենի, կարասների, մետաղի և այլ իրերի այնպիսի նմուշներ, որոնք հալտնի չեն ոչ Անիից, ոչ էլ Դվինից. այս նյութերի ուսումնասիրութւոյնը նույնպես մեծ կտրեորութւոյն է ներկայացնում ուշ միջնադարյան մշակութւոյնի պատկերը և հիմնական առանձնահատկութւոյնները, ժամանակագրութւոյնի հարցերը պարզելու տեսակետից։

Գառնիի պեղումների արդյունքները կարևոր են այն պատճառով, որ բնորոշ լինելով խոշոր գյուղաքաղաքի համար միաժամանակ բացահայտում են գյուղաքաղաքից գրեթե շտաբերվող միջնադարյան փոքր քաղաքի պատկերը՝ իր տնտեսութւամբ, կենցաղով, մշակութւով և դավառի այլ քաղաքների հետ ունեցած կապերով։